թիւնը որ կը կատարուէին Զիթենեաց լերան վրայ։ Զանց կ'ընենք իւրաքանչիւր ժողովի համար նոյն ճաշոցի մէջ նշանակուած Ս. Գրոց Ընթերցուածոց աղբիւրը։

Ս. Ծնունդեան հինգերորդ օրը. (մաս մը կտրուած է հոս ձեռագիրը) «. . . Սուրբ լեառն Զիթենեաց և այս կանոն կատարի».

Ծաղկազարդին. «ի նմին աւուր ի յիններորդ ժամու ելանեն ի լեառն Զիթենեաց հանդերձ ոստովք արմաւենեաց և անդ սաղմոսեն և աղաւթեն մինչև մերձ ի մեռանելորդ ժամն, և այնուհետև իջանեն ի Սուրբ Յարութիւն սաղմոսելով . . .»։

Աւագ երեքշաբթի օրն. «երեքշաբթի աւր ժողովին ի լերինն Զիթենեաց ի տասներորդ ժամու և այս կանոն կատարի . . .»։

Աւագ հինգշաբթի օրն. «. . . նոյն ժամայն ելանեն ի լեառն Զիթենեաց և կատարեն զերեկոյեան պաշտաւնն. և յարեն ի սոյն և զնսկուսն և ըստ երից սաղմոսաց գոբաղայ, և աղօթք հանդերձ ծունր դնելով կատարեն . . .» «ի սմին ժամու գիշերոյն ելանեն ի քրտրն և այս կանոն կատարի. . .» «ի նմին ժամու գիշերոյն ժողովին յաշակերտարանն և ընթեռնուն աւետարանն. . .» «ի նմին ժամու գիշերոյն իսկոյն իջանեն ի Սրբոյ լեռնէն Զիթենեաց ի Գեթսեմանի. . .»։

Զատկի օրը. «. . . ի նմին կիւրակէի Սրբոյ Զատկին ելանեն յիններորդ ժամու ի սուրբ լեառն Զիթենեաց և անդ վայր մի սաղմոսեալ իջանեն հանդերձ սաղմոսիւք ի Սուրբ Յարութիւնն . . .»։

Զատկի հինգշաբթի օրը. «Հինգշաբթի աւր ի Ս. լեառն Զիթենեաց և այս կանոն կատարի . . .»։

Զատկի ութորեքին. «. . . ի նմին աւուր կիւրակէին ելանեն ի լեառն Զիթենեաց ի տասներորդ ժամու և անդ սաղմոսեալ վայր մի՝ իջանեն սաղմոսիւք ի Սուրբ Յարութիւն . . .»։

Հոգեգալուստ. «. . . ի նմին աւուր կիւրակէին ի տասներորդ ժամուն ժողովին ի Սուրբ լեառն Զիթենեաց ի քրտին և այս կանոն կատարի . . .»։

Չորրորդ դարուն վերջերը, լատին կոյս մը, Etheria անուն, ուխտաւորութեան համար կ'այցելէ Երուսաղէմ և իր տեղեկութիւններն ու Ս. Տեղեաց պաշտամունքին հաւաքումներն Օրագրութեան ձեւով կը հաղորդէ Կալիցիոյ մէջ իր վանքին հաւատաւոր քոյրերուն. Etheriaի Օրագրութեան ձեռագիրը 1887ին գտնուած, և նոյն տարին հրատարակուելով՝ թարգմանուած է